



ՎԵՆԳԻՍ

Տ. ՇԱԽԷ ԱՒԱԳ ՔՆՆՅ. ՄԷՄԵՐԾԵԱՆԻ

Մայիսի 22-ին երկարապետ հիւանդութենէ ետք Լաս Վեկասի մէջ ի Տէր հանգեաւ Արեւմտեան թեմէն ներս երկարամեայ նուիրեալ ծառայութիւն ունեցող եւ Վէն Նայսի Սուրբ Պետրոս Հայց. Եկեղեցւոյ Պատրիարքական Հոգեւոր Հովիւ՝ Աթ. Տ. Շախէ աւագ քնյ. Մէմերճեան: Տէր Հայրը հանգստեան կոչուելէ ետք Երեւանի մէջ հետ փոխադրուեցաւ Լաս Վեկաս եւ Կոնստանտնուպոլիս Հայց. Եկեղեցւոյ կազմակերպման աշխատանքներուն մէջ մեծ բաժին ունեցաւ եւ խորհրդապետի դարձաւ Միաբնակ հոգեւորական:

Թեմական առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրպերեանի գլխաւորութեամբ հանգուցեալ Տէր Կոր Վերջին Օծումը Սուրբ Պատրարքի ընթացքին կատարեցաւ Հինգշաբթի, Մայիս 27-ին, Վէն Նայսի Սուրբ Պետրոս Հայց. եկեղեցւոյ մէջ, իսկ Ուրբաթ, Մայիս 28-ին, առաւօտեան ժամը 10:30-ին Թաղման Կարգը Կրօնի ունեցաւ Սան Տիէկոյի մէջ:

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԺ. Տ. ՇԱԽԷ ԱՒԱԳ ՔՆՆՅ. ՄԷՄԵՐԾԵԱՆԻ

Ծնած է Այնթապ, Յունուար 18, 1916-ին: Ծնողքը՝ Գեորգ եւ Մարիամ զինք մկրտել քրիստոնէական անունով: Մանուկ հասակին հազարաւոր հայերու հետ արքայապետեան Կալէայ, Սուրիա:

1925-ին փոխադրուած են Զաիլէ, Լիբանան, ուր յաճախած է Ազգային Պաշտօնական Վարժարանը եւ չորրորդ դասարանը աւարտելէ ետք, 1928-ին փոխադրուած են Պէրթի, Լիբանան, ուր երկու տարի յաճախած է Յիսուսեաններու Վարժարանը:

Կ'աշակերտի Անթիլիասի Դպրեւանքին մէջ եւ 1935-ին Երջանկայիշարակ Տ. Շախէ արքեպ. Գասպարեանի ձեռնամբ կը ձեռնադրուի Կիսասարկաւագ: Ամբողջ շրջաններուն ան որպէս ուսուցիչ եւ դպրապետ կը ծառայէ հայ դպրոցներու եւ եկեղեցիներու մէջ: Ծուրով Պէրթի Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ դպրապետի օգնական կը եղանակուի: Համաշ-

խարհային Բ. Պարերազմի ընթացքին զրագրի պաշտօնով կը ծառայէ Անգլիական բանակին մէջ: 1944-1949 եղած է դպրապետ Պէյրութի Ազգային Նուպարեան Վարժարանին մէջ:

Յուլիս 3-ին, 1949, Նիկոսիոյ, Կիպրոս, Սուրբ Աստուածածին Մայր Տաճարին մէջ, Ան-պիս բաժնակալ կը ձեռնադրուի ձեռամբ Կիպրահայոց թմի առաջնորդ՝ Գերշ. Տ. Անտոյ առ-բնայ. Չէպէտանի, որ զինք կ'անուանակոչէ Տ. Շահէ բաժնակալ, ի յիշարակ Անթիլիասի Դպրեմանքի տեսուչ Գերշ. Տ. Շահէ արքեպս. Գասպարեանի:

Արեւմտեան թեմի Առաջնորդական պաշտօնի Տեղապահ՝ Գերշ. Տ. Վարդան արքեպիս-կոպոս Գասպարեանի եւ Գալիֆորնիոյ, Ֆաուլըր Քաղաքի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայց. եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի հրաւերով, Տէր Հայրը, Երէցկին Ալիսը եւ երկու զա-ւակները՝ Գրիգոր եւ Մարիամ Միացեալ Նահանգներուն մէջ կը հաստատուին 1951-ի Հոկ-տեմբերին: Որպէս Հոգևոր Հովիւ, իր առաջին գործը կ'ըլլայ կազմակերպել եկեղեցւոյ ան-դամակցութիւնը, եկեղեցւոյ եւ յարակից շէնքերու վրայ նորոգութիւններ կատարել փայ, ինչ-պէս նաեւ փայագրութեան սկսիլ եկեղեցւոյ *Մրգաստան* ամսաթերթին: Երէցկին Ալիս կը սկսի նրկշաբաթօրեայ հայկական դպրոցի մը կազմակերպման եւ 8 փարի կը շարունակէ իր ծառայութիւնը Ամերիկածին հայերուն հայերէն լեզուն սորվեցնելով:

Որպէս Թեմական Խորհուրդի գործունեայ անդամ, վարած է Առաջնորդարանի բար-բոյուղարի պաշտօնը՝ Երջանկայիշարակ Տ. Շնորհք եպս. Գալուստեանի Առաջնորդութեան օրերուն, ինչպէս նաեւ քարտուղար եւ արեւնադպիր եղած է Թեմական Խորհուրդի՝ 1952-1959: Նշանակուած է Առաջնորդի Փոխանորդ 1958-1970: Տէր Հօր ժաջանութեան եւ մա-րտոցած նուիրեալ ծառայութեան առ ի գնահատութիւն, Երջանկայիշարակ Տ. Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոս իրեն շնորհած է լանջախաչ կրելու արժանութիւն՝ Նոյեմբեր 13, 1959 թուի կոնդակով:

Թեմակալ առաջնորդ Գերշ. Տ. Բաբգէն եպս. Վարժապետեանի թելադրութեամբ, Վեն Նայսի Սուրբ Պետրոս Հայց. եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի հրաւերով եւ Ծխական Ժողո-վի ընտրութեամբ, Տէր Հայրը Ս. Պետրոս եկեղեցւոյ Հովուական պաշտօնը կը ստանձնէ 1962-ի Յունուարին: Մինչեւ հանգստեան կոչուիլը կը ծառայէ այս եկեղեցւոյ մէջ: Շինարա-րական բոլոր գործերը, Կիրակնօրեայ Վարժարանի դասարանները, Սրահը, Ամէնօրեայ Դպրոցի շէնքը եւ հոյակապ եկեղեցին, կառուցուած են իր պաշտօնավարութեան ընթաց-քին, միեւնոյն արեւն գորացնելով եկեղեցւոյ յարակից կազմակերպութիւնները: Շարունա-կած է ծխական թերթի՝ «*Բարի Լուր*» ի հրատարակութիւնը:

1974-ին օրուան առաջնորդ՝ Գերշ. Տ. Վաչէ արքեպս. Յովսէփեանի միջնորդութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոս իր Հայրապետական Կոնդակով Տէր Հօր կը շնորհէ Ազգ. Քահանայութեան պապի: Իսկ 1998-ին կկատարուի անոր Քահանա-յական Ձեռնադրութեան Յիսնամեակը եւ այդ առթիւ Երջանկայիշարակ Տ. Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոս Օրհնութեան Գիր կը դրիկ Տէր Հօր:

ԴԻԲԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ
ԱՄԵՆՈՒԿԱՅԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԷՄԻ